ՀՏԴ: 591.1

MYOTIS BECHSTEINII- ՆՈՐ ՏԵՍԱԿԸ ԱՐՑԱԽԻ ՖԱՈՒՆԱՅԻ ՀԱՄԱՐ (ՀԱՄԱՌՈՏ ՀԱՂՈՐԴՈՒՄ)

Վ.Տ.Հայրապետյան
Կենսաբանության ամբիոն

Արցախի խիրոպտերաֆաունայի հարթաքթերի ընտանիքին ավելացնել ևս մեկ տեսակ՝ Myotis bechsteinii Kuhl. 1818 :

Արցախի տերիտոֆաունայում ձեռաթևավորների (Chiroptera) կարգը ներկայացված է մեծ բազմազանությամբ: Նրանք հանդիսանում են տարբեր լանդշաֆտային գոտիների, 300-ից մինչև 2200մ ծովի մակերևույթից բարձրությունների, բնակիչներ: Այսօր ապացուցված է, որ սրանք չափազանց օգտակար գազանիկներ են, որովհետև ոչնչացնում են անտառների, այգիների, մարգագետինների և կուլտիվացված ցանքատարածքների առավել վնասատու հանդիսացող միջատներին:

Լեռնային Ղարաբաղի խիրոպտերաֆաունան ներկայացված է երեք ընտանիքներով՝ պայտաքթեր-Rhinolophidae՝ հինգ տեսակներով, բուլդոգակնքպներ-Mollosidae՝ մեկ տեսակով և հարթաքթեր կամ սովորական չղջիկներ -Vespertilionidae՝ 19 տեսակներով:

Այսպիսով, ամփոփելով ձեռաթևավորների վերաբերյալ մինչ օրս եղած տեղեկությունները /1,2/, կարելի է խոսել հանրապետությունում հանդիպող սրանց 25 տեսակների վերաբերյալ: Եվս երկուսի կարգավիճակը գտնվում է պարզաբանման գործընթացում:

Ինչ վերաբերում է հարթաքթ չղջիկների ընտանիքի Myotis ցեղին պատկանող՝ Բեխշտեյնի գիշերաչղջիկի- Myotis bechsteinii հայտնաբերմանը, ապա դա փաստագրված է Իվանյան /Խոջալու / գյուղի մոտակայքում մեր կողմից բռնված չորս անհատներով և Ստեփանակերտի գյուղատնտեսական բոլեջի տնօրեն՝ Ա.Լ.Ջիվանշիրյանի կողմից մեկ անհատով՝ բռնված Բերքաձորի /Հասանաբադ/ ուսումնափորձնական տնտեսությունում /Յավրույան, Հայրապետյան,2003/ :

Հիմնվելով վերոշարադրածի վրա, առաջարկում ենք Արցախի խիրոպտերաֆաունայի հարթաքթերի ընտանիքի 19 տեսակներին ավելացնել ևս մեկը՝ Բեխշտեյնի գիշերաչղջիկին- Myotis bichsteinii Kuhl .1818.

Ամփոփում

ԼՂՀ–ում ձեռաթևավորների կարգը (Chiroptera) ներկայացված է երեք ընտանիքներով՝ պայտաքթեր-Rhinolophidae (հինգ տեսակ), հարթաքթեր-Vespertilionidae (տասնինն տեսակ), բուլդոգակներպներ- Mollosidae (մեկ տեսակ):

Խիրոպտերոլոգիական հետազոտության արդյունքում ԼՂՀ ֆաունայում հայտնաբերվել է հարթաքթերի ընտանիքի մեկ նոր տեսակ՝ Բեխշտեյնի գիշերաչղջիկ- Myotis bichsteinii:

Резюме

Отряд рукокрылых (Chiroptera) НКР прдставлен тремя семействами: подковоносыс-Rhinolophidae (пять видов), гладконосыс или обыкновенные летучие мыши- Vespertilionidae (девятнадцать видов), бульдоговые- Mollosidae (один вид).

В результате продолжительных иследований нами был выявлен новый для фауны НКР вид Myotis bechsteinii.

Գրականություն

1.Даль С.К., Животный мир Армянской ССР, Ереван, 1954.
2. Кузякин А.П, Летучие мыши, Москва,1950.
3.Է.Գ.Յավրույան, Վ.Տ.Հայրապետյան, Ղարաբաղի վայրի կաթնասունները, ք.Ստեփանակերտ, 2003, բաժին I: